

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ԲԵՆԿԱՆ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. — Գ. Համբարձում-
րիւն. վարժարաններու և գիմնազիոն-
ներու համար. Լ. Գարբիէլ Վ. Ե.
Մէնէվիշեան. Վ. Իեննա, 1897 ամի.

ԲԱՑՈՒԱԾ Է 1898 Թ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XVI ԱՂԻԻՐ XVI IX ՏԱՐԱԶ IX

Միամենայ պատկերազարդ Պատկերազարդ շաբա-
հանգէս մանուկների, ծը- թաթերթ ընտանեկան
նորների և դաստիարակնե- ընթերցանութեան հա-
րի համար: մար:

Կըհրատարակուեն նոյն ուղղութեամբ եւ աշ-
խատակիցների մասնակցութեամբ:

Առաջիկայ 1898 թ. կըհրատարակուեն «Տա-
րազում» Էմիլ Զօլայի նշանաւոր ՊԱՐԻԶ
վէպը, որոնց թւումն և շատ մեծ վէպեր, Բա-
ղուայ բուրժուազիայի գործարանական և Բա-
լտիանի Սեի ՔԱՂԱՔ գործաւորների կեան-
քից:

«Բ. Դոան գաղտնիքը» վէպ, Կ. Պօլսի սուլ-
թանների կեանքից:

«Աղբիւր» մէջ կըտպագրուեն ԼԷՕՆ ԿԱՅՍՐ
հրահանգիչ-դաստիարակիչ մանկական վէպը և
մի շարք պատմական պօէմաներ. Բնագիտա-
կան բաժինը Աղբիւրի 1/5-ական մասը կը կազմէ:

ԱՂԻԻՐԻ տարեկան գինը 3 ռուբ.: Պատ-
կերները բացառապէս պտրաստովում են Նւ-
րուպուում: ԱՂԻՐՈՒՄ պրեմիայով 4 ռ. (արտա-
սահման 5 ռ. կամ 12 ֆր.): ՄԱՅՐԱԿԱՆ
րախտ պրեմիայով 7 ռ. (արտասահման 10 ռ.
կամ 30 ֆր.): ՏԱՐԱԶԻ տարեկան գինը
6 ռուբլի:

Պրեմիաները ստանում են տարեկան ըստ-
նորդագինը լիովին վճարելուց յետոյ:

Հասցեն՝ Тифлисъ, редакция иллюстр. жур. Аг-
буръ-Таразъ կամ Tiflis, (Caucase) Réd. des jour. Ag-
bur et Taraz.

Խմբագիր հրատարակի՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Լ. Մէնէվիշեանի կենդանարանութեան և բու-
սարանութեան դասադրքերին հետեւց Գ. հատորը,
որ նուիրուած է Համբարձումրեան: Գրքի տպագրու-
թիւնը և թուղթը նոյնչափ ընտիր են, ինչպէս և
առաջին երկու հատորներին: Այս հատորի ճակա-
տին ևս տպագրուած է Կ. Պօլսոյ ուսումնական
խորհրդոյ վաւերացումն, որով՝ զգին պարտուպատ-
շած քննութեանս խորհուրդը գտել է՝ ըստ ամենայ-
նի զիւրուսոյց և օգտակար ի պէտս Հայ մանկուոյն.
ուստի և կարծածն և կը յանձնարարէ յիշեալ դասա-
դրքին գործադրութիւնն յազգային վարժարանս:

Յառաջարանի մէջ Լ. Աշխատասիրողը յայտ-
նում է, որ ջանացել է պահել նոյն մետոդը, որին
հետեւել է նա առաջին երկու հատորներում: Ա-
նուանակոչութեան համար ասում է, որ չէ խոր-
շել շատ տեղ որինակելու Եւրոպական բառերը
նոյնութեամբ, որոնց դիմացը դրել է հայերէն
յարմարեցրած բառեր, որոնք ըստ կարելոյն բառի
կազմութիւնն են մեկնում: Իսկ ուր հայերէն բար-
դութիւնները երկար են եղել, Լ. Աշխատասիրողը
հետեւելով մեր նախնի մատենագիրների որինակին,
գործ է դրել ընդհանուր գիտնական բառեր:

Հակառակ մեր նոյն գիտնական գրուածքների
մէջ ընդունուած քիմիական բաղադրութեանց նը-
շանագրերը հայերէն տառերով գրելու սովորու-
թեանը, Լ. Աշխատասիրողը լատինական տառերով
է նշանակել այդ ձևերը: Միանգամայն իրաւունք է
այդ, քանի որ ճշմարիտ է, թէ աւելորդ աշխա-
տանք է հայացրած տեսնել ամեն մի գիտնական
բառ, ոճ և ձև, որ անհնարին իսկ է և ի դուր
չարչարանքի պատճառ է լինում ուսանողի համար:
Լ. Քաջունոյ Տարրարանութեան (քիմիայի) եռահա-
տոր պատուական աշխատութիւնը շատ է կորցրել
նորանով, որ հեղինակը քիմիական նշանները հայերէն
տառերով է գծել: Հատ ուղիղ է Լ. Մէնէվիշեանի
նկատողութիւնը, թէ հետեւողական լինելու համար
պէտք կը լինէր, որ թուանշանների փոխարէն էլ
հայերէն ձևեր հնարէինք:

Հանքարանութեան բովանդակութիւնն է՝ ներ-
մուծութիւն, Հանքերու տեսակաց ստորագրու-
թիւն՝ Դաս Ա Տարրեր, Դաս Բ. — Օքսիդ, (Լ.
Քաջունին աւելի յարմար բառ ունի հայերէն սորա
համար՝ թթուութիւն), Դաս Գ. — Օքսիդներ, Դաս
Դ. — Աղակերպներ, Դաս Ե. — Թթուածնաղեր,
Դաս Զ. — Անկածին հանքեր, Ապագածներու ստորա-
գրութիւն՝ Երկրագիտութիւն և Վազմագիտութիւն:

Գրքի վերջում զետեղուած է ցանկ անուանց
հայերէն և ֆրանսերէն, բայց չկայ բառարան, որ
աւելի կարեւոր էր:

Հանքարանութիւնը բաղկացած է Է+139 ե-
րեսներից և զարդարուած է 82 պատկերներով: